Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է Աշխատակազմում կրթության ոլորտի գործառույթներ իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և վարչատնտեսական մասի համակարգողների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների հավակնորդների փաստաթղթերի ընդունում,փաթեթների նախապատրաստում,
բ. Հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կանոնադրությունների նախագծերի նախապատրաստում,
գ. Հանրակրթական ուսումնական հաստատությունների խոհանոցային նյութատեխնիկական վերազինման հետ կապված աշխատանքների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունների ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

ՀՀ քաղաքացիություն, բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելուունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 3 /երեք/ ամիս ժամկետով՝ 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 8-ը:

Աշխատավարձը 267072 /երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ ՀՀդրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

*դիմում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի անունով.
*տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի

(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
*մեկ գունավոր լուսանկար 3X4 սմչափսի,
*անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
*հայտարարություն՝ նշված սահմանափակումների բացակայության մասին.
-պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,
-օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
-օրենքի խախտմամբ պաշտոնին շանակվելու,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
-Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:
Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
Փաստաթղթերն ընդունվում են ամենօր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. Սեպտեմբերի 7-ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀՇիրակի մարզպետի աշխատակազմ/ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության վարչություն, հեռախոս 03124-90-00-156/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Շիրակի մարզպետիաշխատակազմի
գլխավոր քարտուղարԱրսենԱբրահամյանին

.....- ից
դիմողիանունհայրանունազգանունը

.....
դիմողիհեռախոսի համարը

.....
էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀՇիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքայինգործունեությունըհավաստողփաստաթղթի _____ էջ,
4. Զինվորականգրքույկի (առկայությանդեպքում) _____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: